«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

ք. Երևան
Տիգրան Մեծի 4
5-րդ հարկ
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ գրասենյակ

«25» սեպտեմբերի 2020թ
ժ. 11:00

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տվյալների կենտրոնում և հատուկ համակարգչային ծրագրում մշակված բոլոր տվյալների ոչնչացման գործընթացի վերաբերյալ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 50-ից 54-րդ կետերով, 2020թ.սեպտեմբերի 25-ին ժամը 11:00-ին «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ գրասենյակում՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի պող.4, 5-րդ հարկում կազմակերպվել է Տվյալների կենտրոնում և հատուկ համակարգչային ծրագրում մշակված բոլոր տվյալների ոչնչացումը:

Տվյալների ոչնչացման գործընթացին ներկա են եղել.

Տվյալների ոչնչացման կազմակերպիչ՝

Լեոնիդ Ավետիսյան	**«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ** Տնօրեն

Պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ՝

Սիսակ Գաբրիելյան	**ՀՀ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցություն** Պատգամավոր
Արմեն Եղիազարյան	**ՀՀ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցություն** Պատգամավոր

Բագրատ Բաղալյան	**ՀՀ փոխվարչապետ Տ. Ավինյանի խորհրդական**
Ծաղկանուշ Սարգսյան	**ՀՀ առողջապահության նախարարություն** Առողջապահություն ազգային ինստիտուտի Էլեկտրոնային առողջապահության ներդրման բաժնի ղեկավար
Գևորգ Հայրապետյան	**ՀՀ արդարադատության նախարարություն** Անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ
Արմեն Ավետյան	**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** Փրկարար ծառայության կազմակերպման վարչության ծրագրերի ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության կազմակերպման բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ
Թումաս Թումաղայան	**ՀՀ ազգային անվտանգության ծառայություն** Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչության քրեագիտական լաբորատորիայի ինժեներ, ավագ լեյտենանտ
Տիգրան Շախկուլյան	**ՀՀ ոստիկանություն** Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան
Ավետ Մանուկյան	**«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ** Գործադիր տնօրեն
Արմեն Աթոյան	**«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ** Համակարգերի ադմինիստրացիայի թիմի ղեկավար
Վաչե Կարապետյան	**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ** Կիբերանվտանգության փորձագետ
Արման Մուրադյան	**«Յուքոմ» ՓԲԸ** Տեղեկատվական անվտանգության փորձագետ

Տվյալների ոչնչացման գործընթացին չի ներկայացել պատշաճ ծանուցված՝

Արտյոմ Ծառուկյան **ՀՀ Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն**
Պատգամավոր

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 16 մարտի 2020թ. 298-Ն որոշմամբ սահմանված կարգով Տվյալների կենտրոնում և հատուկ համակարգչային ծրագրում մշակված բոլոր տվյալների ոչնչացում

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ՝

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն Լ. Ավետիսյանը ներկայացրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 16 մարտի 2020թ. 298-Ն որոշմամբ սահմանված և մշակված բոլոր տվյալները պահպանվել են ՀՀ կառավարության նշված որոշման իմաստով Տվյալների կենտրոն հանդիսացող «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ում:

Մասնավորապես, Տվյալների կենտրոնում և հատուկ համակարգչային ծրագրում մշակված բոլոր տվյալները հավաքագրվել և մշակվել են ստորև նշված նյութական կրիչներում.

No.	Նյութական կրիչի մոդելը	Ծավալը	Սերիական համար (Serial numbers)
1	Dell MTFDDAK480TDC	480 GB	19422461E240
2		480 GB	19422461E306
3		480 GB	19422461BDA5
4		480 GB	1942246192E2

Ներկայացվեցին բոլոր վերոնշյալ նյութական կրիչները և Տվյալների ոչնչացման գործընթացին ներկա գտվող անձանց հնարավորություն տրվեց ծանոթանալ դրանց վրա նշված նույնականացման տվյալներին՝ մոդելին և սերիական համարին:

Այնուհետև, տեղի ունեցավ տվյալների նյութական կրիչների (տվյալների կենտրոնային համակարգերի կոշտ սկավառակների) ապամագնիսացում և ֆիզիկական ոչնչացում՝ այն ձևով, որն անհնար է դարձնում վերականգնել տվյալների բովանդակությունը:

Հաստատեցին՝

Լեոնիդ Ավետիսյան _____

Սիսակ Գաբրիելյան _____

Արմեն Եղիազարյան _____

Բագրատ Բաղալյան _____

Ծաղկանուշ Սարգսյան _____

Գևորգ Հայրապետյան _____

Արմեն Ավետյան _____

Թումաս Թումաղայան _____

Տիգրան Շախկուլյան _____

Ավետ Մանուկյան _____

Արմեն Աթոյան _____

Վաչե Կարապետյան _____

Արման Մուրադյան _____

Արձանագրությունը կազմված է 4 էջից, 1 բնօրինակից: Ոչնչացման գործընթացին մասնակցած յուրաքանչյուր անձի տրամադրվում է Արձանագրության հավաստված մեկական պատճեն: